

Մենքերին Մեյրոնյան

Ենթադրական եղանակի ժխտական ձևերը Թումանյանի ստեղծագործություններում

Գրողի լեզվի ձևաբանական, շարահյուսական իրակությունների ուսումնասիրման կարևորությունն ավելի է ընդգծվում, երբ խոսքը վերաբերում է այնպիսի հեղինակների, որոնց գործունեությունը համընկնում է գրական լեզվի զարգացման վաղ շրջանին, երբ դրա քերականական շատ իրողություններ գրական մշակման, կայունացման և միօրինականացման ընթացքի մեջ են գտնվում: Նման պարագայում գրողի լեզվի քերականական իրողությունների ուսումնասիրությունը կարևոր նպաստ կբերի նաև գրական լեզվի գիտական պատմության ստեղծման գործին: Եթե համապատասխան շրջանի մեր գրողների, բանաստեղծների լեզվի ձևաբանական իրողությունները հանգամանորեն ուսումնասիրված լինեին, մենք ավելի հավաստի տեղեկություն կունենայինք, ասենք, այնպիսի հարցերի մասին, թե երբվանից են սկսվել նոր գրական լեզվում գործածվել և երբ են ընդհանուր ճանաչում գտել ենթադրական եղանակի ժխտական խոնարհման այժմյան ձևերը, ստացականության հոգնակին և այլն: Այս հարցերից առաջինի մասին արդի հայերենի բայը մենագրական ուսումնասիրության նյութ դարձրած անվանի լեզվաբաններ Հ. Բարսեղյանը և Ա. Աբրահամյանը բավական ընդհանուր ձևով են արտահայտվում: «Նախաստվետական շրջանի հայերենում,- գրում է Հ. Բարսեղյանը,- հանդիպում ենք պայմանական եղանակի բազմաթիվ ժխտական ձևերի, որոնք անորոշ դերբայով են կազմված»¹: «Հետագայում,- գրում է Ա. Աբրահամյանը,- տեղի է ունենում Լ ձայնորդի անկում: Պետք է ասել, որ այդ երևույթը լայն տարածում ստացավ և դարձավ տիրապետող, բայց այդ անցյալում էլ կար. օրինակ՝ Հովհաննես Թումանյանի մոտ գտնում ենք նաև առանց Լ ձայնորդի ձևը՝ «...Նա ձեզ էնքան շատ է սիրում... Նա չի թողնի ձեզ սոված»²: Լ ձայնորդի անկման ժամանակը մատնանշելու նպատակով Ա. Աբրահամյանի կողմից բերված այս միակ օրինակը՝ վերցված Հ. Թումանյանից, զուրկ է հավաստիությունից, որովհետև քաղված է հեղինակի 1939 թ. Միհատորյակից, որտեղ այդ ձևը ամենայն հավանականությամբ տեղ է գտել անզգույշ խմբագրման պատճառով: Թումանյանի Երկերի գիտական հրատարակության մեջ անճշտությունը վերացված է՝ «Նա չի թողնի ձեզ սոված»³: Հասկանալի է, որ այս մասնավոր խնդրին ավելի կոնկրետ պատասխան տալու համար հիշատակված լեզվաբաններն ստիպված պիտի լինեին ուսումնասիրել բավական ծավալուն գրականություն, որ եթե ոչ անհնար, ապա այնքան էլ արդյունավետ չէր լինի: Բայց ահա այդ հարցին անդրադառնում է Ալ. Մարգարյանը Մ. Նալբանդյանի լեզվի ուսումնասիրության կապակցությամբ: Նա նպատակ է դրել պարզել, թե Մ. Նալբանդյանն ինչպես է նպաստել նոր գրական լեզվի քերականական իրողությունների ծավալմանն ու զարգացմանը և այժմ մեզ հետաքրքրող խնդրի կապակցությամբ, հասկանալի պատճառով, կանգնել է որոշակի դժվարության առջև: Նա ստիպված է լինում իրողությունը ներկայացնել Մ. Նալբանդյանի ստեղծագործության ընձեռած հնարավորությունների սահմաններում: Բայց մեզ գոհացուցիչ չի թվում նրա վկայությունը, ըստ որի իբր Նալբանդյանն իր լեզվի զարգացման երեք շրջաններից առաջինում և վերջինում ժխտական դերբայն օգտագործել է անորոշ դերբայի ձևով (չի խոսիլ, չի կարողալ), իսկ միջին շրջանի շուրջ

¹. Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, 1953, էջ 235:

². Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, 1953, էջ 260: Ընդգծումը մերն է:

³. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.1, 1950, էջ 111:

երեք տարվա ընթացքում՝ այժմյան, գրական ձևով¹: Սա անհավանական է թվում, մասնավորապես որ ժխտման դերբայի՝ Նալբանդյանի կողմից գրական ձևով օգտագործման և ոչ մի օրինակ չի բերված:

Ռ. Իշխանյանը նշելով, թե Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջներ»-ում սովորականը ենթադրական եղանակի ժխտական ձևերում դերբայն առանց 1-ի գործածությունն է, չի կամենալ ձևը դեպք է համարում: Նա գրում է. «Անուրջներում» ունենք չի կամենալ դեպքը («Չի կամենալ նա վերստին քեզ տանջել») ²: Բայց Տերյանի բանաստեղծություններում ենթադրական եղանակի ժխտական ձևերը 1-ով գործածելու այլ փաստեր էլ ենք նկատում: Օրինակ՝ «Չեն խավարիլ խավարում»³: «Չեն լսիլ նոցա ձայները...»⁴:

Ենթադրական եղանակի ժխտական ձևերի գործածության հարցում Թումանյանի վերաբերմունքն ստույգ ձևով ներկայացնելը որոշակի դժվարություն է ներկայացնում նաև հետևյալ պատճառով: Վերը նշվեց, թե ինչպես բանաստեղծի միատարրակում անհիմն ձևով տեղ է գտած եղել «չի թողնի» (փոխ. չի թողնի) ժխտական ձևը: Բայց դա եզակի դեպք չէ: Ինչպես ուշադիր դիտարկումն է ցույց տալիս, Թումանյանի ստեղծագործությունների տարբեր հրատարակություններում, նույնիսկ գիտական հրատարակություններ-

րում այժմ մեզ հետաքրքրող որոշ իրողություններ տարբեր ձևով են ներկայացված, թույլ են տրվել անճշտություններ, անհարկի միջամտություններ, որոնց մի մասը, ինչպես ստորև ցույց կտրվի, մինչև օրս էլ պատճառ է դառնում, որ ճիշտ չընկալվի հեղինակի ասելիքը: Նախ նշենք ենթադրական եղանակի ժխտական ձևերի ոչ ճիշտ ներկայացված մի քանի ձևեր:

Մի՞թե, հայրի՛կ, ինձ մոռացան,

Էլ չենք բերիլ հուրն անշեջ⁵:

Ընդգծված բայաձևի գործածությունը ճշգրտվել է բավական ուշ, բանաստեղծի Երկերի երկրորդ գիտական հրատարակությունում. «Էլ չենք բերիլ հուրն անշեջ»⁶:

-Ո՛հ, չէ, սիրուն, էլ ոչ մի սեր

Ճար չի անիլ իմ սրբտին,

Դուք էլ, անուշ սար ու ձորեր,

Չեք դիմանալ էս դարդին...

Այսպես է Թումանյանի 1903թ. Թբիլիսիում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուում¹: Իսկ 1908թ. Բաքվում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուում ընդգծված ձևերը տեղ են գտել առանց 1 վերջնահնչյունի՝ «ճար չի անի», «չեք դիմանա»²: Կարո՞ղ ենք ասել, թե 1-ի կրճատումները Թումանյանի կողմից են կատարված: Դժվար է հարցին դրական պատասխան տալ: Հայտնի է, որ Թումանյանը դժգոհ է եղել Բաքվի ժողովածուի հրատարակությունից, որտեղ անհարկի խմբագրումներ են կատարվել հրատարակչի կողմից, առանց Թումանյանի գիտության: Մի ձեռագիր պատառիկի վրա Թումանյանն այսպիսի դիտողություն ունի. «Մխավներով լիքն է Բաքվի

¹. Ալ. Մարգարյան, Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը, 1957, էջ 199:

². Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, էջ 330:

³. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, երեք հատորով, հ.1-ին, 1960, էջ 182:

⁴. Վ.Տերյան, Երկերի ժողովածու, հ.2-րդ, 1973, էջ 169:

⁵. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.1-ին, 1950, էջ 295:

⁶. Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.2-րդ, 1990, էջ 124:

¹. Հ.Թումանյան, Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1903, էջ 34:

². Հ.Թումանյան, Բանաստեղծություններ, Բաքու, 1908, էջ 50:

հրատարակությունը»³: Մեզ միանգամայն հավանական է թվում, որ Բաբվի ժողովածուի մեջ տեղ գտած «ճար չի անի», «չեք դիմանա» ձևերը հրատարակության կողմից կատարված «ճշգրտումներ» են: Բանաստեղծի երկերի առաջին գիտական հրատարակության մեջ տեղ են գտել «ճար չի անի», «չեք դիմանա» ձևերը (հ.1, 1950, էջ 134), իսկ երկրորդ գիտական հրատարակությունում առաջինը գործածված է լ-ով («ճար չի անիլ»), իսկ երկրորդը՝ առանց լ-ի («չեք դիմանա»)՝⁴:

Միևնույն ստեղծագործության մեջ նույն բայի ժխտական ենթադրականը երկու ձևով ներկայացված լինելու առումով առանձնապես ուշագրավ փաստեր կան «Խոսող ձուկը» հեքիաթում: Այդտեղ կորչել, հասնել բայերի ենթադրական եղանակի ժխտականը ներկայացված է և՛ անորոշ, և՛ ժխտման դերբայներով: «-Ի՛նչ թզուկ, ծնկան ծեղին աքլորը ծուղորուտու կանչի, ձենը ականջը չի հասնիլ»⁵: «-Ի՛նչ փոքրիկ, նապաստակը մի ծայրից մյուսը չի հասնիլ»⁶: «Լավություն արա ու թեկուզ ջուրը գցի՝ չի կորչիլ»⁷: «... ջուրը գցի – չի կորչիլ»⁸:

Մինչև այժմ ուշադրության արժանացած ենթադրական եղանակի ժխտականի գուգահեռ ձևերը, անկախ այն բանից դրանցում անորոշ դերբայը վերջադիր լ-ով է ներկայացված եղել, թե առանց դրան, խոսքի բովանդակության վրա չեն անդրադառնում: Բայց Թումանյանի արձակ ստեղծագործությունների, հատկապես հողվածների տպագրության ժամանակ տեղ են գտել ենթադրական եղանակի նաև այնպիսի ժխտական ձևեր, որոնք նախադասության միտքը երկիմաստ, ուղղակի սխալ ձևով են ներկայացնում: Այդպիսի գործածություն ենք նկատում «Հայկական հարցն ու իր լուծումը» հողվածում: Նշելով, թե դեռ 18-րդ դարի սկզբում Իսրայել Օրին, հայոց բարձր հոգևորականությունը, մեյիքները բանակցության մեջ են մտել Պֆայցի գերմանական կուրֆյուրստի հետ, խնդրել են աջակցել իրենց երկիրը պարսկական բռնակալությունից ազատելու գործում, Թումանյանն ավելացնում է, թե այն ժամանակ, այսինքն՝ 18-րդ դարի սկզբում «գերմանական կուրֆյուրստը, թեև ցանկանում էր օգնել հայերին, հայտնեց, թե եվրոպական պետությունները հակամարտ շահեր ունեն Արևելքում՝ Պարսկաստանում ու Տաճկաստանում, չեն միաբանել հայկական հարցի վրա...»¹: Մի՞թե եվրոպական պետությունները 18-րդ դարի սկզբին կամ դրանից առաջ հայկական հարցը քննարկման առարկա են դարձրել և չեն միաբանել: Կարծում ենք՝ ընդգծված ձևը տպագրական վրիպակի հետևանք է, որ տեղ է գտել Թումանյանի Երկերի ինչպես առաջին², այնպես էլ երկրորդ (հ.7, էջ10) գիտական հրատարակություններում: Ամենայն հավանականությամբ ընդգծված այդ ձևի փոխարեն Թումանյանի կողմից գործածված է եղել՝ չեն միաբանիլ, այսինքն՝ գերմանական կուրֆյուրստն Իսրայել Օրոն և նրա համախոհներին ասել է, թե եվրոպական պետությունները չեն միաբանվիլ հայկական հարցի վրա (և ոչ թե՛ չեն միաբանվել): Եվ մեջբերման անմիջական շարունակությունն էլ հոգուտ այսպիսի ըմբռնման է խոսում: Ավելացնենք նաև, որ հայտնի իրողություն է, որ Թումանյանի ժամանակներում ենթադրական եղանակի ժխտական ձևերում անորոշ «դերբայի իլ լծորդը միշտ փոխվում է իլ ձայնավորի»³: Այսպիսի բազմաթիվ գործածություններ կան Թումանյանի ստեղծագործություններում: Նշենք դրանցից մի երկուսը. «...Ղ.Աղայանը,մեր

³ . Գ.ԱԹ, Թա, ք. 1272:

⁴ . Հ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.1,1988, էջ 188:

⁵ . Հ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.5, 1994, էջ 189:

⁶ . Նույն տեղում:

⁷ . Նույն տեղում, էջ 190:

⁸ . Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ.3-րդ, 1949, էջ 161:

¹ . Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7,1995, էջ 10: Ընդգծումը մերն է:

² . Տես՝ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1951, էջ 227:

³ . Մ. Աբեղեան, Աշխարհաբարի քերականութիւն, 1906, էջ 131: Ընդգծումը հեղինակինն է:

աշխարհքի խեղդուկ մթնոլորտից նեղվելով եթե աղաղակում է թե՛ քիչ է մնում փախչեն
և՛ գրականությունից, և՛ մեր միջավայրից, չի փախչի ու շատ ուրախ օրեր կտեսնի...»⁴:
« Իսկի մարդն էլ չի եղ բանին հավանիլ, - համաձայնեց Գոքորը»⁵:

Առանց մանրամասնելու նշենք, որ վրիպակի հետևանքով և լծորդի փոփոխություն
տեղ է գտել Թումանյանի նաև մեկ այլ հոդվածում, հետևյալ նախադասության մեջ.
«Մականյան նոքա չեն խաբել ընթերցող հասարակությանը և հայոց մուսայի համար
ընդհանուր արհամարհանք են վաստակել»⁶: Ավելի ճիշտ մոտեցում է ցուցաբերված
եղել Թումանյանի Երկերի առաջին գիտական հրատարակությունում, որտեղ
ընդգծված բայաձևը ներկայացված է «չեն խաբիլ» ձևով⁷: Նոքա, այսինքն՝
բանաստեղծի հռչակ ունենալու ցանկությամբ տարված ապաշնորհները, որ «հանգեր
թխելով» ուզում են Ոլիմպոս բարձրանալ, չեն խաբիլ (= չեն խաբի), չեն կարող խաբել
ընթերցողին:

Արտասովոր երևույթ չէ, երբ գրական ճանաչված քերականական ձևը լեզվի
զարգացման ընթացքում իր տեղը զիջում է բարբառային, խոսակցական համարված
ձևին կամ հավասար գործածություն ունեցող զուգաձևերից մեկն է հաղթող
հանդիսանում՝ նվաճելով գրական նորմայի իրավունք: Արևելահայերենում
զարգացման այդպիսի ընթացք է ունեցել, օրինակ, օժանդակ բայի եզակի թվի 3-րդ
դեմքի ժխտակն ձևը: 1906թ. հրատարակված իր «Աշխարհաբարի քերականություն»
աշխատության մեջ Մ.Աբեղյանը հետևյալն է նշում. «Ներկայ ժամանակների մեջ եմ
օժանդակի բացասական երրորդ դեմքը չէ՛ յաճախ ժողովրդական ձևով դառնում է չի.
ինչպես՝ չէ ասում, չէ ասել, չէ ասելու դառնում են՝ չի ասում, չի ասել, չի ասելու»¹: Բայց
այժմ, ինչպես հայտնի է, վերջին ձևերն են գրական ճանաչվում: Նույնպիսի ընթացք է
ունեցել նաև ենթադրական եղանակի ժխտական ձևերի զարգացումը:
Արևելահայերենի առաջին քերականագետների կողմից գավառական բարբառներին,
խոսակցական լեզվին բնորոշ ճանաչված չեմ սիրիլ, չեմ կարողա և նման ձևերը հաղթող
հանդիսացան գրական համարված չեմ սիրիլ, չեմ կարողալ և նման ձևերի հանդեպ:
«Գավառական բարբառներում,- գրում է Ս. Պալասանյանը,- երբեմն 1 տառը բաց է
թողվում չեմ խօսիլ, չեմ ուշանալ, չեմ ասիլ, չէի գնա.- որ ոմանք գրաօրի մեջ էլ են
գործածում»²: Նույնն է արձանագրում նաև Մ. Աբեղյանը. « Անորոշ դերբայի 1
վերջաորոտիներ խոսակցական, երբեմն և գրական լեզուի մեջ յաճախ դուրս է
ընկնում: Օրինակ՝ չեմ գրիլ, չեմ խօսիլ, չեմ գնալ(լ), չեմ զարմանալ(լ)»³:

Ընդհուպ մինչև 20-րդ դարի 20-30-ական թվականները ենթադրական եղանակի
ժխտական ձևերը զուգադիր գործածություն են ունեցել, և բնականաբար նման
գործածությունը պիտի արտացոլված լիներ նաև Թումանյանի
ստեղծագործություններում: Պատմական մոտեցում չցուցաբերելու դեպքում միայն
կարելի է ժամանակի գրական նորմայից շեղում դիտել ենթադրական եղանակի
ժխտական ձևերի 1-ով կազմությունները, որոնք՝ որպես ժամանակի գրական նորմայի
դրսևորումներ, բավական բարձր հաճախականություն ունեն Թումանյանի
գեղարվեստական և հրապարակախոսական ստեղծագործություններում: Նշենք
համապատասխան մի քանի օրինակներ. «Էլ չեն խաբիլ մեզ նրանց մեքենաներն ու
ճարտար արվեստները» (հ. 7, էջ 148): «Կսովորի, հո էղպես չի մնալ...» (հ. 5, էջ 41):

⁴. Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, 1994, էջ 287:

⁵. Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, 1994, էջ 12:

⁶. Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, 1994, էջ 13:

⁷. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4-րդ, 1951, էջ 9:

¹. Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, 1906, էջ 133:

². Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1974, էջ 160:

³. Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., էջ 132:

«Տեղն ընկած տեղը ոչինչ չի խնայի նրա գործին վնասելու» (հ. 6, էջ 223): «Էդ տեսակ կարծիք չի լինի» (հ.7, էջ 41):

Ահա և ենթադրական եղանակի ժխտական ձևերի առանց լի կազմություններ. «Էնպես չեմ անի, որ բռնի» (հ. 5, էջ 63): «Հյուր չե՞ք ընդունի ձեր տունն էս գիշեր» (հ 5, էջ 188): «Չենք բողնի որ չենք բողնի» (հ 5, էջ 189): «Վախենում է մի «խաթաբալա» չի դուրս գա միջից» (հ 6, էջ 8) և այլն:

Այսպիսով, Թումանյանի ստեղծագործություններում ենթադրական եղանակի գուգադիր ժխտական ձևերի գործածությունը (չեմ կարդալ, չեմ գրիլ – չեմ կարդա, չեմ գրի) պայմանավորված է ժամանակի արևելահայ գրական լեզվի զարգացման վիճակով և ոչ թե անհատական մոտեցման հետևանք է: Այդ գուգադիր ձևերը ճշգրտորեն արտացոլված չեն հեղինակի երկերի նույնիսկ գիտական հրատարակություններում:

Ե խոնարհման բայերի ենթադրական եղանակի ժխտական որոշ ձևեր ոչ ճիշտ ներկայացված լինելու պատճառով (չեն միաբանել - փոխանակ՝ չեն միաբանիլ և այլն) Թումանյանի կողմից արտահայտվող միտքը երկիմաստ, ուղղակի սխալ ձևով է ներկայացվել:

Уподробление параллельных отрицательных форм сослагательного (гипотетического) наклонения в произведениях Ов. Туманяна

Резюме

С. Мелконян

В произведениях Ов. Туманяна употребление параллельных отрицательных форм сослагательного наклонения (չեմ կարդալ, չեմ գրիլ - չեմ կարդա, չեմ գրի) обусловлено состоянием развития восточноармянского литературного языка в тот период, а не является следствием индивидуального подхода.

Эти параллельные формы не точно отражены даже в академических изданиях автора. По причине неточной передачи некоторых отрицательных форм сослагательного наклонения глаголов "Ե" спряжения (չեն միաբանել-вместо չեն միաբանիլ) мысль, выраженная Туманяном, представлена двусмысленно, просто неверно.